Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

Արարատ
a r a v o t d a i l y

36/4132/ 28 փետրվարի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224

ԵՄ նախարարները մտահոգվեցին

Եվրամիությունը որոշել է լրջորեն զբաղվել Հարավային Կովկասով: Թե ինչո՞ւ են մեր երեք պետություններն արժանացել նման «պատվի»՝ կարելի է ենթադրել: Միջին Արեւելքում, Ռուսաստանում, ինչպես նաեւ Իրանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները սեւեռում են եվրոպացիների ուշադրությունը մեր տարածաշրջանի վրա: Չեմ կարծում, որ նրանք շատ մեծ սպասելիքներ ունեն Հարավային Կովկասի երկրներից. ԵՄ-ի առավելագույն ակնկալիքը այն է, որ մենք լինենք կանխատեսելի եւ հասկանալի: Ահա թե ինչու երեկ ԵՄ անդամ 27 երկրների արտգործնախարարները քննարկեցին վիճակը Հարավային Կովկասում եւ ընդունեցին փաստաթուղթ, որի բովանդակությունը հայտնի կդառնա այսօր:

ԵՄ արտգործնախարար Քեթրին Էշթոնը, ըստ «Ազատություն» ռադիոկայանի, իր «խորը, խորը մտահոգությունները» (այդպես էլ ասաց՝ այդ բառը երկու անգամ կրկնելով) հայտնեց այն ամենի շուրջ, ինչ կատարվում է Հայաստանում եւ Ադրբեջանում՝ ղարաբաղյան խնդրի հետ կապված:

Ընդունվելիք փաստաթղթում հավանաբար նշվելու է Եվրամիության պաշտոնյաների համար Լեռնային Ղարաբաղ առանց նախապայմանների մուտք ապահովելու կարեւորությունը: Ի՞նչ է թաքնված այդ նուրբ դիվանագիտական ձեւակերպման տակ: Բանն այն է, որ Ադրբեջանը շատ դեպքերում պնդում է, որ արտասահմանցիներն՝ ընդհանրապես եւ պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները՝ մասնավորապես, Լեռնային Ղարաբաղ մուտք գործեն իրենց թույլտվությունը ստանալուց հետո, հակառակ դեպքում նման պաշտոնյան կամ գործիչը հարեւան երկրում կարող է հայտարարվել persona non grata: Հավանաբար հենց այս՝ թույլտվություն ստանալու նախապայմանն են ուզում վերացնել ԵՄ ներկայացուցիչները:

Եվրամիության արտգործնախարարներին մտահոգել են նաեւ Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները: Ճվեդիայի արտգործնախարար Կառլ Բիլդտը խոստացավ կենտրոնանալ արդար եւ ազատ ընտրությունների անցկացման հարցի վրա: Այստեղից կարելի է ենթադրել, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունները եվրոպացիների կողմից գնահատվելու են ավելի խիստ չափանիշներով, քան դա եղել է 2007-2008 թվականներին: Հատուկ ուշադրություն է դարձվելու ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, մամուլի բազմակարծությանն ու դատական համակարգի անկախությանը: Ուղղություններ, որտեղ վերջին չորս տարում որոշ շարժ կա, սակայն փոփոխություններն ընթանում են դանդաղ եւ վարանող քայլերով:

Առաջին անգամ նման մակարդակով խոսվում է Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի մասին, ինչից կարելի է եզրակացնել, որ մեր երկրում այդ երեւույթը հասել է այնպիսի մասշտաբների, որ հեռավոր Բրյուսելում է նույնիսկ նկատելի դարձել: «Այս ոլորտում իրական առաջընթացը շարունակում է մնալ տնտեսական զարգացման եւ բարգավաճման հիմքը»,- ասվում է ընդունվելիք փաստաթղթի նախագծում: Կարելի է ավելացնել նաեւ, որ կոռուպցիան խանգարում է ոչ միայն տնտեսական բարգավաճմանը, այլեւ արդար ընտրությունների անցկացմանը եւ ինչու չէ՝ նաեւ ղարաբաղյան խնդրի լուծմանը: Հայաստանում եւ Ադրբեջանում քաղաքական էլիտայի անվերահսկելի հարստացման եւ ղարաբաղյան խնդրի միջեւ միայն առաջին հայացքից է, որ կապ չկա:

Բայց դա արդեն այլ թեմա է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ընտրակեղծիքների դեմ պայքարի նոր առաջարկ՝ ըստ ՀՅԴ-ի



Երեկ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը Քաղաքագետների միությունում ներկայացրեց ընտրակեղծիքների դեմ պայքարի նոր առաջարկ: Տեսնելով, որ 2000 միջազգային դիտորդ չի գալու Հայաստան՝ ՀՅԴ-ն պատրաստվում է ստեղծել «Արդար ընտրությունների կամավորական շարժում»: Ըստ Հրանտ Մարգարյանի՝ ընտրվելու են «օրենք հասկացող, խելքը գլխին, քաջ, համարձակ եւ անշահախնդիր» մարդիկ: Aravot.am-ի հարցին, թե ինչպե՞ս են ընտրելու կամավորներին եւ խուսափելու «ծոտյալներից»՝ պարոն Մարգարյանը պատասխանեց. «Պետք է արձանագրվեն, դրանից հետո նայած ով ինչ տեսակ աշխատանքի ավելի ընդունակ է՝ համապատասխան պատրաստություն պետք է տեսնեն, եւ նաեւ պետք է մեր սիստեմով գտնենք, այսպես ասած, «ծոտյալներին»: Ըստ Հրանտ Մարգարյանի՝ ընտրությունները կարող են արդար լինել, եթե դա պարտադրվի այս իշխանությանը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

«Կնգա նման մի լացեք»

«Ասենք՝ ԱՄՆ-ում ինչպե՞ս է. կուսակցությունն ինքն իր ներսում դաժան, շատ սկզբունքային պայքարի միջոցով փորձում է պարզել իր առաջնորդին, որը կգնա նախագահական ընտրություններին: Հանրությունը հնարավորություն ունի հետեւելու, մանրամասն ծանոթանալու ամեն թեկնածուի դիրքորոշմանը, նրանց բանավեճերի ընթացքում իր կարծիքը հայտնելու: Լիդերին ընտրում է ոչ միայն կուսակցությունը, այլեւ ամբողջ ժողովուրդը»,- «Առավոտի» հարցին՝ հետեւո՞ւմ եք կուսակցությունների համամասնական ցուցակների ձեւավորման ընթացքին եւ ի՞նչ տպավորություններ ունեք, ասաց ԱԺ նախկին փոխխոսնակ Կարապետ Ռուբինյանը՝ զուգահեռելով. «Հայաստանում ի՞նչ է կատարվում՝ ամբողջությամբ գաղտնիության քողի տակ, մանր-մունր կենցաղային մակարդակի ինչ-որ բանակցություններ են գնում, հետո կնգա նման նեղանում, հետո ինչ-որ կոմպրոմիսների են գալիս»: Ռուբինյանն առաջարկում է. «Դուք, մրցակցություն արեք, մի հատ էլ քվեարկություն արեք եւ դրա ռեյտինգի վրա ձեւավորեք ձեր ցուցակն ու գնացեք ընտրության»:

Կարդացեք էջ 3:

Քաղաֆիի ճանապարհը կամ ՁՈՒ-ն ընդդեմ ընդվզումների

Երեկ խորհրդարանում «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի նախագծի քննարկմանը «Ժառանգություն» խմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանը հայտարարեց, թե ինքը համամիտ չէ արդարադատության նախարարի այն կարծիքին, թե մեր երկիրը Քաղաֆիի ճանապարհով չի գնում. «1995-ին օգտագործվեցին ՀՀ զինված ուժերը ընդդեմ քաղաքական ընդվզումների, 2008-ին նույնպես օգտագործվեցին ՀՀ զինված ուժերը»: Պատգամավորը նաեւ հիշեցրեց Սահմանադրության համապատասխան հոդվածը, ըստ որի՝ «Զինված ուժերի օգտագործումը քաղաքական նպատակներով անթույլատրելի է»: Արդարադատության նախարարը եւս նույնն ասաց. «Ես էլ եմ ուզում կրկին կրկնել, որ զինված ուժերի օգտագործումը քաղաքական նպատակներով անթույլատրելի է, եւ եթե ինչ-որ մարդկանց համար հայրենիքի պաշտպանությունը չի ներառում նրա սահմանադրական կարգի պաշտպանությունը, ես ոչինչ չունեմ ավելացնելու եւ մեկնաբանելու»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

Առողջության ապահովագրություն
Որտե՞ղ եւ ինչպե՞ս ապահովագրել առողջությունը: Սոցիալական փաթեթի մասին Ձեզ հուզող բոլոր հարցերին կպատասխանեն 59-21-21 հեռախոսահամարով:
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերություն

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Զորակցություն

Այսօր, ժամը 13-ին, Ազգային գրադարանում կկայանա Թուրքիայի բանտում գտնվող մտավորական Ռագըփ Զարաքօլուի զորակցության արարողությունը:

Եղանակ

Երեւան - 5 + 7, Ճիրակ - 12 + 1, Կոտայք - 12 + 1, Գեղարքունիք - 12 + 1, Լոռի - 10 + 6, Տավուշ - 5 + 12, Արագածոտն լեռներ - 12 + 1, Արագածոտն նախալեռն. - 7 + 8, Արարատ - 6 + 10, Արմավիր - 6 + 10, Վայոց Ձոր լեռներ - 12 + 1, Վայոց Ձոր նախալեռն. - 6 + 10, Սյունիքի հովիտներ - 5 + 12, Սյունիքի նախալեռներ - 8 + 7, Արցախ - 3 + 7

Օրենքը բանակը չի դարձնում քաղաքական պրոցեսների մասնակից

Պնդում է արդարադատության նախարարը, իսկ ընդդիմադիրները հակառակ կարծիքի են

Խորհրդարանը սկսեց քննարկել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի նախագիծը: Սա այն օրինագիծն է, որը դեռ նախորդ քառօրյայում բուռն քննարկումների տեղիք տվեց, այդուհանդերձ, ընդունվեց առաջին ընթերցմամբ: Ըստ ընդդիմադիր պատգամավորների՝ այս օրինագծով հնարավոր է դառնում զինված ուժերի ներգրավումը պետության ներքին գործերին: Ըստ օրինագծի հեղինակների՝ նման բան չկա եւ չի կարող լինել: Ըստ ամենայնի, այս օրինագծում ինչ-որ բան դուր չէր եկել նաեւ կառավարությանը, քանի որ ԱԺ հերթական քառօրյայից անմիջապես առաջ կառավարությունը հետ կանչեց օրինագիծը՝ լրամշակելու նպատակով, եւ ապա հարցը հրատապ ճանաչելով՝ կրկին բերվեց խորհրդարան: Երեկ, աշխատանքային օրվա ավարտին, խորհրդարանը սկսեց քննարկել օրինագիծը: Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը ներկայացնելով օրինագիծը՝ հայտարարեց. «Ժողովրդի դեմ ոչ թե բանակը չի կարելի հանել, այլ անգամ մեկ տեղամասային տեսուչի, եւ այս նախագիծը ոչ միայն չի կարող նման բան նախատեսել, այլեւ դրան անդրադառնալ, եւ ցանկացած օրենք, եթե դրա նման բան պարունակի, պարզապես կլինի հակասահմանադրական»:

Արդարադատության նախարարը նաեւ հավելեց. «Եթե ինչ որ մեկի մտքով անցնում է, որ սա կարող է գործիք լինել ընդդեմ քաղաքական հակառակորդների, ապա նման լեքսիկոնը (բառապաշարը- Մ. Ե.) պետք է դուրս գա մեզանից: Իմ ճիշտ լինելը եւ ձեր մտահոգությունների անհիմն լինելը ժամանակն է ցույց տալու»: Այդուհանդերձ, ընդդիմադիր ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների պատգամավորները բավականին ակտիվորեն ձեռնամուխ եղան օրինագծի քննարկմանը եւ հայտնեցին իրենց մտահոգությունները:

Արդարադատության նախարարը ի պատասխան Վահան Հովհաննիսյանի հարցի՝ ասաց. «Երբ Դուք չեք հավատում իմ ազնվությանը, թույլ տվեք նաեւ ես Ձեր ազնվությանը չհավատամ այս հարցադրումներում: Սա որպես նախաբան, իսկ երբ Քադաֆիին եք մեջբերում, մեր երկիրը Քադաֆի չի եւ չի էլ լինելու այդպիսին: Այո, 60-65 թվականից եղել են արտակարգ դրություններ եւ այլն, սակայն այս օրենքը դրա հնարավորությունը չի տալու, այս օրենքը դա բացառելու է: Այս օրենքը հենց հնարավոր իշխանությունը յուրացնողների դեմ գործիք է»: Ըստ նախարարի՝ արդեն իսկ ոստիկանությունում սկսվել է բարեփոխումների գործընթացը, եւ «չպետք է վախենալ», որ բանակը կարող է օգտագործվել: Ի պատասխան՝ Վահան Հովհաննիսյանը ասաց, թե ինքը ոչ թե կասկածի տակ է դնում նախարարին, այլ կառավարությանը, ինչին էլ ի պատասխան՝ Հրայր Թովմասյանն ասաց. «Ես կառավարության անդամ եմ»: Վահան Հովհաննիսյանը կրկին պարզաբանեց. «Սահմանադրությունը հստակ նկարագրում է այն իրավիճակները, որտեղ հանրապետության նկատմամբ կա հարձակում, եւ չի ասվում, որ դա անպայման արտաքին ինտերվենցիան է. հարձակումը կարող է լինել նաեւ պետական հաստատության վրա՝ ներսից, եւ այդ դեպքում կարելի է մտցնել ռազմական դրություն, ո՞վ է խանգարում, եթե դրան է հերթը հասել, մտցրեք ռազմական դրություն եւ օգտագործեք բանակը: Մենք կասկածում ենք ոչ թե Ձեր ասածներին, մենք տեսնում ենք, որ չի համապատասխանում օրենքը Սահմանադրությանը»: Նախարարն էլ իր հերթին ընթերցեց Սահմանադրության համապատասխան հոդվածները եւ պնդեց իրենը: Արդարադատության նախարարի ներկայացմամբ՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը «բանակը որեւէ կերպ քաղաքական պրոցեսներին մասնակից չի դարձնում, որովհետեւ ասացի եւ կրկնում եմ՝ այս օրենքը բանակը չի դարձնում քաղաքական խնդիրների, քաղաքական պայքարում հակառակորդի նկատմամբ օգտագործելու միջոց: Այսինքն՝ քաղաքական հակասությունը ինքնին չի առաջացնելու նման իրավիճակ, քաղաքական հակասությունը, որը վտանգ կսպառնա սահմանադրական կարգին, այդ դեպքում՝ այո: Եվ այս օրենքը բանակը որեւէ կերպ քաղաքական պայքարի մասնակից չի դարձնում»: Ըստ Զարուհի Փոստանջյանի՝ արդարադատության նախարարը յուրովի է մեկնաբանում Սահմանադրությունը՝ «Սահմանադրության մեջ չկա պարտավորություն՝ սահմանադրական կարգի պահպանման մասին», իսկ ըստ նախարարի էլ՝ եթե իր իրավագիտակցության աստիճանը եւ իրավական նորմերի իր ընկալումը չի համապատասխանում պատգամավորի ընկալմանը, «ապա դա չի նշանակում, որ Դուք եք ճիշտ: Եթե ինքնիշխանությունը կորցրած հայրենիքն է Ձեր հայրենիքը, եթե ես իմ երկրի ինքնիշխանության պաշտպանությանը չեմ մասնակցելու, կներեք՝ էդ որ պաշտպանությա՞ննն եմ մասնակցելու»:

Ստեփան Սաֆարյանն էլ իր հերթին հարցրեց՝ մի՞թե այդքան վատ է գրված Սահմանադրությունը, որ ամեն ոք կարող է կարդալ եւ տարբեր կերպ ընկալել. «Շատ վատ է, երբ ՀՀ քաղաքացու համար գրված փաստաթուղթը կարող է ունենալ 3 միլիոն մեկնաբանություն»:

«Ճակատամարտը» կշարունակվի այսօր:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

---

http://civilitasfoundation.org/logo/

Սիվիլիթաս հիմնադրամը հրավիրում է

«Հայերենը ժամանակի հորձանուտում»

թեմայով քննարկմանը:

Բանախոսներն են՝

«Cosmopolitan Հայաստան»-ի գլխավոր խմբագիր Հրաչուհի Ութմազյանը

Հայալեզու «Երեւան» ամսագրի գլխավոր խմբագիր Արտավազդ Եղիազարյանը

ՍիվիլՆեթ/ՆյուզՀաբ, երգիծաբան Նարեկ Մարգարյանը

Քննարկումը կվարի Սիվիլիթաս հիմնադրամի տնօրեն Սալբի Ղազարյանը

Քննարկումը տեղի կունենա փետրվարի 29-ին, ժամը 14:00-ին, «Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119:

Տեղերը սահմանափակ են:

Ինչ է սպասվում ՀԱԿ-ի հանրահավաքում

Մի քանի օր է մնացել ՀԱԿ-ի հանրահավաքին, եւ Կոնգրեսի անդամները ոչ մի կերպ չեն բացում փակագծերը, թե մասնավորապես ինչ է սպասվում հանրությանը այդ օրը, կլինե՞ն կտրուկ գործողություններ կամ քայլեր:

Aravot.am-ը այս առնչությամբ Կոնգրեսին հարող ՍԴՀԿ անդամ Գուրգեն Եղիազարյանին խնդրեց մի փոքր բացել գաղտնիքները: Պարոն Եղիազարյանի մեկնաբանությամբ՝ «Հայ ժողովուրդը կգա, կկանգնենք, կզրուցենք ժողովրդի հետ եւ կորոշենք, թե սրանցից (նկատի ունի ներկա իշխանություններին) երբ ենք ազատվում»: Մենք փորձեցինք ճշտել՝ այսինքն՝ ապստամբությո՞ւն է լինելու, ինչ-որ կտրուկ քայլե՞ր... Պարոն Եղիազարյանը պատասխանեց. «Գիտեք, իրե՛նք են մղում կտրուկ քայլերի, որովհետեւ մարդկանց սովի մեջ են պահում, որ շարքային քաղաքացին ստորանա եւ երազի իրենց տված 5000 դրամը, իսկ հետո էլ թողնի գնա Հայաստանից: Պետք է կանգնեցնենք այս ամեն ինչը»: Պարոն Եղիազարյանը նշեց, որ կոնկրետ որեւէ բան որոշված չէ, եւ երբ ժողովուրդը գա, տեղում կորոշեն իրենց անելիքները:

Նշենք, որ ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը տարբեր առիթներով, այդ թվում՝ Մարդու իրավունքների օրը Ազատության հրապարակում ելույթի ժամանակ հայտարարել է, որ ժողովրդի ընդվզման նոր ալիք են բարձրացնելու այդ հանրահավաքին եւ հեռացնելու են իշխանությանը, բայց թե կոնկրետ ի՞նչ քայլեր են կատարելու՝ չեն հրապարակվում:

Հ. ՁԵԲԵՁՅԱՆ

Գագիկ Ծառուկյանն առաջարկել է քվեարկել խղճի մտոք

Այսօր ԱԺ-ում քննարկվելու է խորհրդարանի 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելու վերաբերյալ ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունը: Դեռ անցած շաբաթ yerkir.am-ի հետ զրույցում ԲՀԿ խմբակցության պատգամավոր Նաիրա Զոհրաբյանն ասել էր, թե երկուշաբթի օրը խմբակցության նիստի ընթացքում կքննարկեն եւ կորոշեն, թե ինչպես են քվեարկելու այս օրինագծին: Զոհրաբյանն ասել էր, որ խմբակցության երեկվա նիստում է որոշվելու նաեւ, թե արդյոք ԲՀԿ-ն կմիանա՞ երեքշաբթի օրը ԱԺ-ի մոտ ՀՅԴ նախաձեռնած ցույցին, թե՞ ոչ:

Aravot.am-ի հարցին ի պատասխան՝ Նաիրա Զոհրաբյանն ասաց, թե՝ այո, քննարկվել է օրինագծի վերաբերյալ ԲՀԿ խմբակցության որդեգրելիք դիրքորոշման հարցը: «Իհարկե, մենք խմբակցության նիստ կգումարենք նաեւ այս հարցի քվեարկությունից առաջ՝ չորեքշաբթի առավոտյան, բայց մեր դիրքորոշումն այդ առնչությամբ հետեւյալն է. սկզբունքորեն մենք միանշանակորեն պաշտպանում ենք խորհրդարանի՝ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին աստիճանական անցումը, ինչը, ուզում եմ հիշեցնել, ամրագրված է մեր կուսակցության 2007թ. ռազմավարական ծրագրում եւ հաստատվել է համագումարի կողմից: Սակայն այս պահին հարցի առնչությամբ խմբակցությունում կան տարբեր տեսակետներ. մեկն այն է, որ անհրաժեշտ է օր առաջ կատարել այդ փոփոխությունները եւ պաշտպանել մեր գործընկերների առաջարկած նախագիծը: Նաեւ տեսակետ կա, թե՝ ընտրություններից 2 ամիս առաջ խաղի կանոն փոխելը նպատակահարմար չէ: Լսելով խմբակցությունում առկա տեսակետները՝ կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանն առաջարկել է, որ խմբակցությունը կայացնի ազատ քվեարկություն՝ յուրաքանչյուրը քվեարկի իր խղճի մտոք: Կարծում եմ՝ սա ճիշտ որոշում է եւ խոսում է խմբակցությունում առկա, նաեւ ներկուսակցության ժողովրդավարության մասին»,- մանրամասնեց Նաիրա Զոհրաբյանը:

Ինչ վերաբերում է ՀՅԴ-ի նախաձեռնած ցույցին, ապա, պատգամավորի փոխանցմամբ, ԲՀԿ-ականները ցույցին չեն մասնակցի, բայց խորհրդարանում օրինագծի քննարկմանն ակտիվորեն կմասնակցեն:

Նկատի ունենալով, որ ԲՀԿ-ն, այնուամենայնիվ, կողմնակից է խորհրդարանի 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին աստիճանական անցմանը, հարցրինք՝ հնարավո՞ր է, որ վաղը քննարկման ժամանակ ԲՀԿ-ական պատգամավորներն առաջարկեն այս փուլում գոնե կրճատել մեծամասնական տեղերի քանակը: «Նման առաջարկներ մենք բազմիցս, նաեւ վերջին շրջանում տեղի ունեցած քննարկումների ժամանակ արել ենք: Մեզ համար դա եւս ընդունելի ճանապարհ է: Եթե հիշում եք, ես ինքս առաջարկեցի նաեւ, որ եթե այս պահին խնդիրը զուտ ժամանակի ու ընթացքում խաղի կանոն չփոխելու առումով իր լուծումը չի ստանալու, միգուցե արժե աշնանը խնդիրը դնել խորհրդատվական հանրաքվեի, ինչի հնարավորությունը «Հանրաքվեի մասին» օրենքում արված փոփոխությունը մեզ տալիս է, եւ լսենք նաեւ հանրության ձայնը: Այսինքն՝ տարբերակները բազմաթիվ են, բայց մեզ համար մեկ բան հստակ է՝ եթե մենք ուզում ենք ունենալ քաղաքական մոտիվացիայով առաջնորդվող խորհրդարան եւ կայացած քաղաքական կուսակցություններ, ապա դրա ճանապարհը մեկն է՝ անցում 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի»,- եզրափակեց ԲՀԿ խմբակցության ներկայացուցիչը:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Կարապետ Ռուբինյանը չի ուզում կորցնել ազատությունը

ԱԺ նախկին փոխխոսնակը առայժմ անկուսակցական կմնա

- Պարոն Ռուբինյան, կողմնորոշվեցի՞ք՝ ինչպե՞ս եք շարունակելու Ձեր հետագա քաղաքական գործունեությունը: «Ազատ դեմոկրատներին» անդամակցելո՞ւ եք:

- Երկար մտածելուց հետո որոշեցի, այնուամենայնիվ, ձեռնպահ մնալ որեւէ կուսակցության անդամակցելուց:

- Ինչո՞ւ:

- Այդքան տարի ինձ վրա կրել եմ պատասխանատվությունը՝ ՀՀՇ-ի անդամ լինելով: Հիմա հազիվ ազատվել եմ դրանից եւ պատասխանատու եմ միայն ինձ համար, իմ արածի ու չարածի համար: Ազատություն է, որը արագ նորից կորցնել չեմ ուզում: Պարզ է ձեր հարցի էությունը՝ ընտրություններ են մոտենում. պարզ ասեմ՝ հանուն նրա, որ հայտնվեմ որեւէ ընտրացուցակում, չեմ պատրաստվում որեւէ կուսակցության անդամագրվել:

- Իսկ մեծամասնական ընտրակարգով Ձեր բախտը կփորձե՞ք:

- Չէ, չեմ փորձի, որովհետեւ քաղաքական պայքար չկա: Եթե քաղաքական պայքար լիներ, մեծամասնականով միգուցեեւ մտածեի: Բայց այդ դեպքում էլ դժվար թե, որովհետեւ այնպիսի ֆինանսական արգելափակոց է դրված, որն ինձ համար այս պահին անհաղթահարելի է:

- Պատրաստվում եք քաղաքականությունից է՞լ դուրս գալ:

- Քաղաքականությունից դժվար թե դուրս գամ: Պարզապես խորհրդարանական ընտրությունները չեմ դիտարկում որպես քաղաքական թեժ պայքար: Որովհետեւ, այնուամենայնիվ, պետք է կամ հիմար լինես, որ հավատաս Սերժ Սարգսյանի երաշխիքներին, թե՝ արդար ընտրություններ են լինելու, կամ զառամախտով տառապես, որ չհիշես, թե նույն Սերժ Սարգսյանն ինչպիսի դերակատարում է ունեցել Ռոբերտ Քոչարյանի «արդար» ընտրություններում:

Ցավոք, եղավ այն, ինչ կանխատեսվում էր: Փաստորեն, հանցավոր ռեժիմի հովանու ներքո կամ քավորությամբ պիտի անցնեն այս ընտրությունները: Չեմ ասում, որ չարժե պայքարել: Պայքարել արժե, բայց եական բան չի փոխվելու: Պայքարել արժե, որովհետեւ հիմա մատների վրա հաշված պատգամավորներ կա՝ «Ժառանգության» ներկայացուցիչները, ովքեր ակտիվ պատգամավորական գործունեություն են ծավալում, եւ լավ կլինի, որ այդ թիվը կրկնապատկվի կամ եռապատկվի, ակտիվ պատգամավորներ շատ լինեն: Բայց արդեն հասկանալի է, որ այս ընտրությունների միջոցով չի կարող լինել ռեժիմի հեռացում: Այս ընտրությունները կարող են օգտագործվել ռեժիմի հեռացման պայքարը թեժացնելու համար, բայց, ցավոք, դրա նախանշանները էլ դեռ չեն երեւում:

- Այսինքը՝ կարծում եք, որ ՀԱԿ-ի պայքարն առանձնապես արդյունքներ չի՞ տալու:

- Դեռ պայքար չկա: Նախորդ՝ նստացույց էր, ցույց էր, հանրահավաք էր, դրանից հետո, ըստ էության, որեւէ քաղաքական պայքար կամ նոր ձեւեր կիրառելու մասին հայտարարություն, նախանշան չեմ տեսնում, եթե չհաշվենք Հրազդանի ընտրությունները, որտեղ դասական մասնակցություն էր եւ «դասական» պարտություն՝ ներկա ռեժիմի թելադրանքի տակ: Հիմա, եթե նույնը պետք է կրկնվի, պարզ է, որ որեւէ պայքար կամ արդյունավետ պայքար դա համարել չի կարելի: Իսկ նոր ձեւերի՝ ճնշման, ժողովրդական ալիք բարձրացնելու, անհնազանդության մեթոդների վերաբերյալ խոստումներ կան, բայց դրանք սկսում են հակասել նախորդ տարվա գարնանն արված հայտարարություններին, թե դրանք ՀԱԿ-ի համար անընդունելի են: Այդտեղ էլ պետք է ինչ-որ պարզաբանումներ, ճշգրտումներ արվեն: Շուտով հանրահավաք է, կտեսնենք՝ ինչ-որ նոր բան կասեն, թե ոչ:

- Դուք մասնակցելու ե՞ք մարտի 1-ին կայանալիք հանրահավաքին:

- Չեմ կարող ասել: Իհարկե, հետաքրքիր է, բայց ընտանեկան խնդիրներ ունեմ:

- Ներկայացվող՝ իշխանության կողմից ուղղորդված սոցիոլոգիական հարցումներն ու վերլուծությունները «կանխատեսում» են, որ հաջորդ ԱԺ-ում լինելու են ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը: Հնարավոր համարո՞ւմ եք, որ այդ սցենարն իրականանա, եւ ՀՅԴ-ն ու «Ժառանգությունը» դուրս մնան:

- Եթե հավատում եք արդար ընտրությունների, իհարկե՝ հիմարություն են այդ թվերը եւ կանխատեսումները: Իսկ եթե խոսքն այն մասին է, որ ընտրությունները կեղծվելու են ռեժիմի կողմից, ապա էլի հիմարություն է, որովհետեւ ռեժիմն ինչպես ցանկանա՝ այնպես էլ կանի, էլի, ի՞նչ իմաստ կա ժողովրդի կարծիքը հետախուզելու: Հիմա կարող է դրսից լինեն ճնշումներ, համակերպվելով կամ արձագանքելով այդ ճնշումներին՝ ենթադրենք, որոշեն ՀԱԿ-ին տալ 15-20 տեղ կամ էլ որոշում են, որ ընդհանրապես չեն տալիս, փոխարենը մեկ ուրիշի են տալիս: Տարբեր տարբերակներ կարող են լինել, բայց դրանք ժողովրդի իրական կարծիքի եւ ժողովրդավարության հետ առնչություններ չունեցող հարցեր են:

- ԲՀԿ-ն վերահաստատեց իր հավատարմությունը իշխող կոալիցիային, մինչդեռ ՀԱԿ-ում դեռեւս շարունակում են հուսալ, որ ԲՀԿ-ն կարող է իրավիճակ փոխել: Համենայնդեպս, Հրանտ Բագրատյանն «Առավոտին» տված հարցազրույցում չէր բացառել, որ ԲՀԿ-ն կարող է վերակողմնորոշվել: Նման զարգացումները հավանական համարո՞ւմ եք:

- Դա ինձ համար հետաքրքիր թեմա չէ, որովհետեւ ԲՀԿ-ն նույն հանցավոր ռեժիմի հենասյուներից է: Ես չեմ ասում, որ իշխանության մեջ որեւէ հակասություն չկա, եւ որ հենց նույն ԲՀԿ-ն չի ձգտում ավելի ընդլայնել իր ազդեցությունն իշխանության մեջ՝ մի քանի ավելի մանդատ, մի քանի ավելի պաշտոններ: Կան, եւ հանցախմբի ներսում դրանք բնական ձգտումներ են: Բայց մեզ՝ հասարակ ժողովրդին, հասարակությանը դրանից ի՞նչ: Այդ հակասությունները կարող են սրվել այնքան ժամանակ, մինչեւ ընդհանուր ռեժիմը չզգա իր գոյության համար վտանգ: Հենց որ դա զգացին՝ իրենք կհամախմբվեն, ինչպես որ համախմբվեցին 2008 թվականի մարտի 1-ին: Այդ դեպքում դառնում է մի պատ, որը պետք է ջարդես, որպեսզի կարողանաս երկիրը զարգացման ուղիով տանել:

- Երեկ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը հայտարարել էր, որ իրենք կամավորականների են հավաքագրում՝ իշխանություններին ազատ ու արդար ընտրություններ պարտադրելու համար: Գործնականում Դուք դա հնարավոր համարո՞ւմ եք:

- Հավաքագրումը՝ այո: Ավելի արդյունավետ ձեւ էլ կա՝ ընդդիմադիր դաշտի բոլոր կուսակցությունները կարող են համագործակցության պայմանագիր ստորագրել եւ համատեղ շտաբներ ձեւավորել այդ ուղղությամբ: ՌԴ-ում էլ նման գործընթացներ կան:

Հնարավոր է համատեղել ուժերը եւ պայքարել:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եթերաժամի սակագներն այս տարի ողջամի՞տ են

Շուտով հեռուստաընկերությունները պետք է հրապարակեն, թե ինչ սակագներ են սահմանելու առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանակներում քաղաքական գովազդի համար: Ինչպես գիտենք, ամեն ընտրություններին, որքան էլ հեռուստաընկերությունները վստահեցնում են, թե սահմանել են ողջամիտ գին, այնուամենայնիվ, հեռուստաեթերի գները հարուցում են մի շարք քաղաքական ուժերի եւ պատգամավորության թեկնածուների դժգոհությունը:

Երեկ aravot.am-ը մի քանի հեռուստաընկերություններից հետաքրքրվեց, թե արդեն որոշե՞լ են մոտավորապես ինչ գին են սահմանելու 1 րոպեի դիմաց, եւ դրանք իսկապե՞ս ողջամտության սահմաններում են: «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության տնօրեն Դավիթ Հակոբյանը տեղեկացրեց, որ իրենք արդեն որոշել են սակագները. «Մեկ րոպեն չի տարբերվելու այն գներից, ինչ գոյություն ունի առեւտրային գովազդի դեպքում, մոտավորապես կազմելու է 30-35 հազար դրամի կարգի: Մենք ժամային սահմանափակում էլ չենք դնելու: Օրենքով սահմանված կարգով մեր իրավունքներն օգտագործելու ենք, տարբերություն չենք դնելու. ոնց որ այլ գովազդներն ենք ընդունում, նույն կերպ ու նույն սակագներով էլ քաղաքական գովազդն է լինելու»: Մեր դիտարկմանը, որ ամեն տարի սովորական առեւտրային գովազդի սակագները տարբերվում էին քաղաքական գովազդից՝ պարոն Հակոբյանը պատասխանեց. «Ես չգիտեմ ամեն տարի՝ ոնց, բայց այս տարի ասում եմ այն, ինչ որոշված է»:

«Հրազդան» հեռուստաընկերության տնօրեն Մնացական Հարությունյանի խոսքերով՝ «Դեռ վերջնական գինը որոշված չէ, մոտ օրերս որոշում կկայացնենք: Կարող եմ ասել, որ կիրառելու ենք միջինացված գին: Ինչպես տեղական ինքնակառավարման մարմնի ընտրությունների ժամանակ սահմանեցինք 1 րոպեն՝ 8000 դրամ, երեւի այդքան էլ կսահմանենք հիմա»: Պարոն Հարությունյանը հայտնեց, որ իրենց առեւտրային գովազդի 1 րոպեն դարձյալ մոտավորապես այդքան է: «Ա թի-վի» հեռուստաընկերության տնօրեն Վահագն Խաչատրյանն էլ նշեց, որ դեռ չեն որոշել սակագները. «Դեռ չենք կարող հրապարակել, բայց սկզբունքորեն այն շատ չի տարբերվելու առեւտրային գովազդի գներից, միջինացված գին է լինելու, ինչը որ օրենքը պահանջում է»:

ՀՈՒՓՍԻՄԵ ՁԵԲԵՁՅԱՆ

Ինչ է առաջարկում Զարգացման Հայկական Բանկը եւ ինչու

Մաքսիմում տոկոս եւ մաքսիմում շահավետ պայմաններ:

14% ՀՀ դրամով ավանդ՝ Զարգացման Հայկական Բանկում

Զարգացման Հայկական Բանկը մինչեւ մայիսի 31-ը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առաջարկում է ժամկետային ավանդի նոր տեսակ՝ խնայողական ավանդ «Մաքսիմում», 2 տարի ժամկետով, ՀՀ դրամով՝ 14%, ԱՄՆ դոլարով՝ 10%, եվրոյով՝ 8% տարեկան տոկոսադրույքով:

Զարգացման Հայկական Բանկի Հաճախորդների սպասարկման վարչության ղեկավար Անհա Անանյանը նշում է, որ բանկային համակարգում այսօր նախադեպը չունեցող այս առաջարկի գրավչությունը միայն տոկոսադրույքներում չէ: Բացի բարձր տոկոսադրույքներից, Զարգացման Հայկական Բանկի ավանդատուները, ըստ Ա. Անանյանի, պայմանագրի գործողության ողջ ընթացքում ֆինանսական դժվարություններ ունենալու դեպքում կարող են մասամբ կամ ամբողջությամբ նվազեցնել ավանդի գումարը, որի համար կստանան ավելի բարձր տոկոսագումարներ, քան նախատեսված է բանկում գործող ցպահանջ ավանդների համար: Ավանդի խզման դեպքում տոկոսագումարի վճարումն իրականացվում է հետեւյալ սկզբունքով՝

ա) եթե ավանդի գումարը նվազեցվում է պայմանագրի կնքման օրվանից 6 ամսվա ընթացքում, կամ նվազեցվող գումարը գերազանցում է ավանդի գումարի 50%-ը, ապա տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է ցպահանջ ավանդի համար նախատեսված տարեկան տոկոսադրույք՝ գումարած 2% տարեկան

բ) եթե ավանդի գումարի նվազեցումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից 6 ամիս հետո եւ նվազեցվող գումարը չի գերազանցում ավանդի գումարի 50%-ը, ապա տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է ՀՀ դրամի դիմաց՝ 12%, ԱՄՆ դոլարի՝ 9% եւ եվրոյի՝ 7% տարեկան տոկոսադրույքներով:

Ավանդի նվազագույն գումարը կազմում է 500.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, իսկ առավելագույնը՝ 50.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:

Զարգացման Հայկական Բանկը 2011 թվականին գրանցել է հաճախորդներից ներգրավված միջոցների անախադեմ աճ՝ 115% կամ 11.7 մլրդ ՀՀ դրամ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդներն աճել են 2.2 անգամ, իսկ ավանդատուների քանակը՝ 2.3 անգամ:

«Բանկն իր առջեւ խնդիր է դրել երկարաժամկետ, փոխշահավետ, վստահության վրա հիմնված համագործակցություն հաստատել թե՛ մեր գործող եւ թե՛ նոր կամ հավանական հաճախորդների հետ: Արդեն իսկ մեկ տարի է, ինչ նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ 10 մլն դրամին համարժեք ավանդ ունեցող հաճախորդները բանկի 14 անուն ծառայություններից օգտվում են անվճար, որոնց թվում են հաճախորդի համար այնպիսի կարեւոր ծառայություններ, ինչպիսիք են՝ միջազգային փոխանցումների իրականացումը, կանխիկացումը, պլաստիկ քարտերի տրամադրումը եւ սպասարկումը, ինտերնետ-բանկ համակարգը եւ այլն: Ավելացնեմ, որ սպասարկման այս քաղաքականությունը կրելու է շարունակական բնույթ»,- նշում է Անհա Անանյանը:

«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Մանրամասների համար՝
հեռախոս՝ 59 14 55, 59 15 15
www.armdb.com
info@armdb.com

Հանրակացարանի գործին վարչապետն է խառնվել

Ըստ բնակիչների՝ այն պոռնիկի է սեփականաշնորհվել

Թբիլիսյան խճուղի 3/2 հասցեում գտնվող հանրակացարանում 20 տարուց ավելի է՝ բնակվում են մանկատանը մեծացած երիտասարդներ, փախստականներ եւ սոցիալապես անապահով ընտանիքներ: Այդ ընտանիքների մի մասը ժամանակին աշխատել է էլեկտրալամպերի գործարանում եւ միանշանակ բնակարան ստանալը՝ բնակվել է հանրակացարանում, սակայն այդպես էլ նոր տան երես չեն տեսել եւ այդտեղ էլ մնացել են: Բնակիչների ներկայացմամբ՝ այդ տարիների ընթացքում պարտաճանաչ վճարել են բնակարանի վարձը եւ մյուս կոմունալ վճարները՝ հուսալով, որ մի օր կսեփականացնեն իրենց սենյակները: Սակայն երբ դիմել են սեփականաշնորհելու համար, հայտնաբերել են, որ շենքն արդեն սեփականատեր ունի, որն էլ պնդում է, թե շենքն իրեն է պատկանում եւ ոչ ոքի անգամ մի թիզ չի տա:

Բնակիչներից մեկի՝ Աշոտ Միքայելյանի պատմելով՝ հանրակացարանը նախկինում պատկանել է թիվ 9 ուսումնարանին, որի հետ «Աշխատանքային ռեզերվներ» կազմակերպությունը 2003 թվականին պայմանագիր է կնքել, ըստ որի՝ իրավունք է ստացել շենքի 1-ին հատվածն ու 2-րդ հատվածի միայն 4-րդ հարկն անհատույց օգտագործել, որը վերանվանվել է «Օլիմպիական պատրաստման կենտրոն»: Ըստ բնակիչների՝ երբ այդ պայմանագրի ժամկետը լրացել է, կազմակերպությունը 2008-ին դիմել է կադաստրի պետական կոմիտե՝ շենքն ամբողջությամբ սեփականացնելու: Ընդ որում, ինչպես բնակիչներն են վստահեցնում՝ «Աշխատանքային ռեզերվներ» կազմակերպությունը կադաստրին

ոչ լիարժեք տեղեկություններ է տրամադրել՝ հայտնելով, որ շենքն անմարդաբնակ է: Մինչդեռ այդ շենքում 28 ընտանիք է բնակվում: Բնակիչները «Առավոտի» հետ զրույցում մեկ առ մեկ ներկայացրին կոմունալ վճարների բոլոր այն կտրոնները, ըստ որոնց՝ իրենք 1991 թվականից սկսած՝ բնակվում են այդ հասցեում:

Հանրակացարանի բնակիչներն արդեն 1 տարուց ավելի է՝ հրաժարվում են բնակվարձը վճարել, պատճառաբանելով, որ գանձումներն անօրինական են: Նրանց խոսքերով. «Իսկ շենքի սեփականատեր կոչվածը մեզ սպառնում է որ դուրս շպրտելու, եթե վարձերը չմուծենք: Անգամ բնակիչների սենյակներ է ներխուժում եւ վարձի տեղը՝ եղած գույքը վերցնում: Այս տարիների ընթացքում մեզ անգամ տեղեկանք չէր տալիս, որ բնակիչները կարողանային «Փարոսից» օգտվել կամ պոլիկլինիկա դիմել»:

Մեկ այլ բնակչի՝ Նաիրա Պետրոսյանի ներկայացմամբ էլ՝ «Ըստ օրենքի, այդ հասարակական կազմակերպությունը, որը տարածքը ստացել է անհատույց օգտագործման համար, իրավունք չունի մեզ գնատեր կոչվածը մեզ սպառնում է հետ պայմանագիր կնքելու ու վարձավճարներ ստանալու: Իսկ ինձ հետ պայմանագիր է կնքել, որով պարտավորվում էի բնակվճար կատարել, դեռ մի բան էլ կազմակերպության կնիքն է խփել: Ոտքից գլուխ այդ կազմակերպությունը կեղծարարությամբ է զբաղվում»:

Խնդրի առնչությամբ բնակիչները դիմել էին կառավարություն, որն էլ դատի է տվել այդ կազմակերպությանը, սակայն արդեն 3 տարի է, ինչպես բնակիչներն են ասում՝ դատական գործընթացը ձգձգվում է, իսկ շենքի սեփականատերը շարունակում է բնակիչներից վճարներ պահանջել:

«Մենք նաեւ դիմել էինք նախագահի աշխատակազմ, մեզ պատասխանել էին, որ սեփականատերն իրավունք չունի մեզանից գումարներ գանձելու՝ մինչեւ դատական գործընթացը չավարտվի»,- ասաց Նաիրա Պետրոսյանը:

Նշենք, որ նախորդ տարվա դեկտեմբերին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը այցելել էր հանրակացարան. բնակիչների հավաստմամբ՝ խնդիրը մանրամասն ներկայացրել են, որից հետո վարչապետը խոստացել է, որ կսեփականացնեն բնակարանները: Հանրակացարանի բնակիչները դիմել էին նաեւ Երեւանի քաղաքապետարան, մարդու իրավունքների պաշտպանին, քաղաքաշինության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն եւ մի շարք այլ գերատեսչություններ: Երեւանի քաղաքապետարանը հանրակացարանի բնակիչ Աշոտ Միքայելյանին պատասխանել է. «Ըստ օրենքի՝ Երեւան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակարանները Երեւանի քաղաքապետի որոշմամբ անհատույց օտարվում են այն քաղաքացիներին, ովքեր մշտապես հաշվառված եւ փաստացի բնակվում են այդ բնակարաններում՝ ներկայացնելով բնակարանի հատկացման վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթեր...»:

Բնակիչների խոսքերով՝ «Բայց հայտնվել է մեկը, որը պետական գույքը պոռնիկաբար սեփականացրել է, իսկ մեզ զրկել մեր իրավունքներից: Թող իրավապահ մարմիններն իրավիճակն ուսումնասիրեն ու կեղծարարությունը բացահայտեն: Առավել եւս, որ վարչապետը մեզ թույլատրել է սեփականացնել մեր տնօրինած սենյակները»:

Տարածքային կառավարման նախարարի տեղակալ Սարգիս Հովհաննիսյանը խոստացել է առաջիկա օրերին հանդիպել հանրակացարանի բնակիչների հետ: «Գոնե լսեն ու հասկանան, որ մեր պահանջն օրինական է»,- ասացին բնակիչները:

«Առավոտի» հետ զրույցում «Օլիմպիական պատրաստման կենտրոնի» տնօրեն Ստյոպա Հարությունյանը վստահեցրեց, որ շենքը օրինական ճանապարհով է ձեռք բերել, եւ առկա է կադաստրի վկայական. «Էդ իրենք են պոռնիկի մտել շենք: Ես նոր եմ սոցպաշխարարությունից դուրս եկել, այդ հարցը քննարկման փուլում է, տեսնենք՝ ինչ կլինի»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Էրեբունիի որոշ տարածքներ կջրազրկվեն

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, պլանային շինարարական աշխատանքների հետ կապված, ս.թ. փետրվարի 29-ին, ժամը 09.00-ից մինչեւ մարտի 1-ը, ժամը 09.00-ը, կդադարեցվի Էրեբունի վարչական շրջանի Արցախի պողոտայի, Երկաթուղայինների փողոցի եւ նրանց հարակից ճեռնարկությունների ու տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

Քաղաքապետին ժամադրում են Մաշտոցի այգում

Երեւանի քաղաքապետի եւ գլխավոր ճարտարապետի հայտարարությունները՝ Մաշտոցի այգում կրպակներ տեղադրելու վերաբերյալ, հակասում են միմյանց: Երեկ «Ուրբաթ» ակումբում նման կարծիք հայտնեցին «Մենք ենք այս քաղաքի տերը» եւ «Մեր քաղաքը» քաղաքացիական նախաձեռնության անդամները: Ըստ նախաձեռնության անդամ Գոռ Հակոբյանի. «Երեւանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը Հանրային խորհրդի լսումների ժամանակ հայտարարել է, որ այդ խանութները, որոնք այդ տարածքում կառուցում են, քաղաքապետարանի սեփականությունն են, եւ մենք դեռեւս չգիտենք, թե դրանք ինչպես ենք օգտագործելու: Քաղաքապետն ասում է՝ այդ տարածքները փոխհատուցում են այն խանութներին, որոնք Աբովյան փողոցից հանեցինք: Հակասությունն այն է, որ եթե դա Երեւանի սեփականությունն է, էլ ի՞նչ փոխհատուցման խնդիր կա»:

Ըստ Գ. Հակոբյանի՝ քանի որ քաղաքապետարանի մոտ ակցիայի ժամանակ ակտիվիստներին չհաջողվեց հանդիպել քաղաքապետ Տարոն Մարգարյանի հետ, ուստի նրանք քաղաքապետին են հրավիրում այգի. «Մենք այգուց չենք հեռանում, սպասում ենք քաղաքապետին եւ դեռ հույս ունենք, որ նա կգա»:

Ն. Բ.

Հացի թանկացում՝ հանրապետության ամենաընչազուրկ քաղաքում

Գյումրեցիները իշխանություններին 0 ձայն են խոստանում, եթե հացը չէժանանա

Մի քանի օր առաջ Ազգային վիճակագրական ծառայության կողմից Ճիրակը ճանաչվեց հանրապետության ամենաաղքատ մարզը: Զավեշտալին այն է, որ պաշտոնապես ընչազուրկի կարգավիճակն ստանալն ու Գյումրիում հացի գների թանկացումը մեկ եղան: Ուրբաթ օրվանից 310-370 գրամանոց հացը թանկացել է 10-20 դրամով, այսինքն՝ գյումրեցիները ստիպված են նախկին 100-110 դրամի փոխարեն վճարել 120-130 դրամ: Իսկ սա նշանակում է, որ նրանք պիտի կրճատեն հացի չափաբաժինը, այսինքն՝ օրական միջինը 3-4 հաց գնելու փոխարեն պիտի բավարարվեն 2-3 հացով:

Սա այնպես է զայրացրել գյումրեցիներին, որ վերջիններս հեռուստաեթերով ծաղրուծանակի են ենթարկում կառավարությանը: «Ապրեք դուք, շեն ու շնորհքով մնաք, որ Գյումրին էսպես դատարկում եք, ով դեռ ոտք ունի՝ իր ոտքով կթողնի կգնա, ով էլ չունի՝ մեջքի վրա պառկած կգնա, մեկ է՝ գնալու ենք»,- հայտարարում էր մի ծեր կին: Իսկ թե ում մտահղացմամբ է իրականացվել թանկացումը, խանութատերերի պնդմամբ՝ հինգշաբթի օրը քաղաքի բոլոր հացի փռի տերերը ժողով են կազմակերպել ու եկել են փոխադարձ համաձայնության: Խանութատերերի խոսքերով՝ հացի արտադրամասի սեփականատերերը չեն համբերել անգամ ալյուրի գների կարգավորմանը՝ նկատելով, որ Աժ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող ալյուր ներկրող ընկերությունը 50 կգ ալյուրը թանկացրել է 2 դոլարով, եւ օլիգարխից առաջ են ընկել:

«Առավոտը» ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից հետաքրքրվեց, թե հացի գների թանկացում արձանագրվե՞լ է մայրաքաղաքում: Ըստ հանձնաժողովի՝ «Մենք ամենօրյա մոնիթորինգ ենք անցկացնում մայրաքաղաքի բոլոր սուպերմարկետներում, այդ թվում՝ գնային դիտանցում, եւ հացի գնի թանկացում չի արձանագրվել»:

Ստացվում է, որ Գյումրին անտեր ու անկառավարելի քաղաք է դառնում, ով ինչ ուզում՝ անում է: Գյումրեցի գործարարները ինքնագլո՞ւխ են այս քայլին դիմել, թե՞ կան օբյեկտիվ պատճառներ, այս հարցը պարզաբանելու համար «Առավոտը» դիմեց տնտեսագետ Կարեն Պետրոսյանին: Ըստ մեր զրուցակցի՝ թեեւ վերջին շրջանում միջազգային շուկայում 3-5% ցորենի գնաճ նկատվում է, սակայն միջազգային գներով պայմանավորված՝ Գյումրիում հացի 20% թանկացումը բացառվում է: Տնտեսագետի ներկայացմամբ՝ ամենամեծ խնդիրն այն է, որ Հայաստանում ալյուրի ներմուծման ոլորտը ամբողջությամբ մենաշնորհային է: «Այստեղ տնտեսական մրցակցության հանձնաժողովը կարեւոր գործառույթ ունի՝ համեմատելու միջազգային շուկայում առկա գները, դրան ավելացված, ասենք, տեղափոխման տրանսակցիոն ծախսերը եւ նաեւ այն, թե ինչ գնով է Հայաստանում վաճառվում: Կարեւորագույն խնդիր է, թե ինչու Հայաստանում այլ տնտեսվարողներ չկան, ովքեր զբաղվում են ցորենի ներմուծմամբ, եւ 3-րդ՝ ինչո՞ւ են ներմուծում հիմնականում ուկրաինական ցորենը, մանավանդ, որ մենք գիտենք՝ միջազգային շուկայում ցորենի հաստատված գները որակյալ ցորենի համար են, իսկ անորակ ցորենը բավականին մեծ գնային տարբերություն ունի: Մեզ մոտ ներմուծելով որոշակի ոչ որակյալ ցորեն՝ այն ներկայացվում է որպես որակյալ: Կարծում եմ՝ այս ոլորտը հետազոտման եւ գնահատման կարիք ունի»,- ասաց Կ. Պետրոսյանը: Նա համոզված է, որ տվյալ դեպքում Գյումրիում հացի գների թանկացումը պայմանավորված է հաց արտադրողների ներքին համաձայնությամբ, եւ դա այնքան էլ կապված չէ ալյուր արտադրողների կամ ներմուծողների հետ. «Իրենք ալյուրը ձեռք են բերել հին գնով, եւ կարող էին մինչեւ նոր գնով ձեռք բերելը գների բարձրացում չանել 1-2 օր, մինչդեռ հենց առաջին իսկ բարձրացված օրը հացի գների բարձրացում արձանագրվեց հենց Գյումրիում: Սա նշանակում է, որ մեր քաղաքում ոչ մրցակցային միջավայր է, եւ տնտեսական մրցակցության հանձնաժողովը այս առումով եւս Գյումրիում անելիք ունի: Միգուցե հաց արտադրողները իրենց շահարկումը կանեն, կասեն՝ ալյուրի գինը բարձրացել է 20%-ով, մենք էլ մեր գինը կբարձրացնենք 20%-ով, մինչդեռ դրա իրավունքը իրենք չունեն: Եթե ալյուրի գինը 20%-ով է բարձրացել, եւ հացի գնի մեջ ալյուրի գինը 50% է, հացի գինը 10%-ից ավելի չի կարող բարձրանալ: Մինչդեռ իրենք ուղիղ համեմատական են անում եւ հավելյալ եկամուտներ ստանում. սա ոչ մրցակցային է: Եթե մրցակցություն լիներ, հացի գինը կբարձրացնեին ալյուրի գնի բարձրացման չափով եւ ոչ թե ալյուրի գնի տոկոսին համահունչ: Մինչդեռ իրենք ավելին են բարձրացնում, քան ինքնարժեքով է պայմանավորված»,- վստահեցրեց տնտեսագետը: Նրա խոսքերով՝ Հայաստանում տնտեսությունը խիստ քաղաքականացված է. «Երկրի առաջին դեմքերը, մանավանդ որ դիմացը ընտրություններ են, միգուցե ներմուծողներին զսպեն, միգուցե չզսպեն, որովհետեւ գնային բարձրացումները լուրջ ռեսուրսներ են ընտրապայքարի համար»,- եզրափակեց Կ. Պետրոսյանը:

Ի դեպ, գյումրեցիները տներից դուրս են անում ընտրացուցակ ճշգրտող ՀՀԿ-ականներին՝ ընտրություններին նրանց 0 ձայն խոստանալով:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ա a r a v o t d a i l y
ԵՐԵՔՇԱԲԹԻ 28.02.2012

Իջեւանում «պալատական» նոր կրքեր են բորբոքվում

Ավագանիները քաղաքաթետի գործելաոճը բնութագրում են որպես ինտրիգային եւ բողոքում նրա գործունեության դեմ

«Առավոտն» իր նախորդ համարում ներկայացրել էր Իջեւանի քաղաքաթետարանի գլխավոր մասնագետ Աստղիկ Եգանյանի «վիքիլիքսյան» հայտարարությունն այն մասին, որ քաղաքաթետ Վարդան Ղալումյանն իրեն բազմիցս շանտաժի ենթարկելով եւ սպառնալիքներով՝ իրենից ցուցմունք է կորզել նախկին քաղաքաթետ Վարուժան Ներսիսյանի դեմ: Հիշեցնենք, որ Եգանյանը այդ մասին ցուցմունք է տվել նաեւ Իջեւանի քննչական բաժանմունքում: Իսկ Եգանյանի այդ բացահայտումներից հետո համայնքի ավագանու գործող 13 անդամներից 6-ը հանդես են եկել հայտարարությամբ, որով իրենց դժգոհությունն են արտահայտում քաղաքաթետի նման գործելաոճից: Հայտարարության մեջ գրված է. «ՏԻՄ օրենքով առաջնորդվելու փոխարեն՝ քաղաքաթետը զբաղված է քաղաքաթետարանի աշխատակիցներին ահաբեկելով, համայնքի բնակիչներին դատական գործընթացների մեջ ներգրավելով, հերյուրանքներ տարածելով, ինչպես նաեւ փորձում է իր կողմից ներկայացված անհիմն նյութերով իրավապահ մարմիններին թյուրիմացության մեջ գցել»:

Ավագանիները դժգոհ են նաեւ քաղաքաթետի կողմից անիրատեսական բյուջե ներկայացնելու հանգամանքից, ինչի դեմ էլ իրենք բոյկոտում են ու չեն մասնակցում քվեարկություններին, քանի որ այդ բյուջեն համարում են անիրատեսական: «Քաղաքաթետի կողմից ներկայացված ոչ իրատեսական բյուջեն չի արտահայտում քաղաքի եւ նրա բնակիչների շահերը, մեր կողմից բարձրացված առաջարկությունները եւ փոփոխությունները անտեսվում են քաղաքաթետի կողմից, որի հետեւանքով ներկայացված բյուջեն չի հաստատվում: Քաղաքաթետարանի եւ նրա ենթակա կազմակերպությունների աշխատանքների արհեստական պարալիզացումը, աշխատավարձերի չվճարումը, համայնքում աշխատանքների չիրականացումը քաղաքաթետի կողմից անհիմն պատճառաբանվում է համայնքի բյուջեի չընդունմամբ: Այն քաղաքաթետի կողմից անգործության եւ ՏԻՄ օրենքի 55 հոդվածի չիմացության հետեւանք է, համաձայն որի՝ եթե ավագանին մինչեւ տարվա սկիզբը համայնքի բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով»,- գրված է հայտարարության մեջ:

Ավագանիները քաղաքաթետի աշխատանքը որակում են «աղակառուցողական», ինչը կազմալուծում է քաղաքի բնականոն զարգացումը: Նրանք քաղաքաթետին կոչ են անում. «Ձերդ մնալ անճնավորված եւ ամբիցիոզ գործելաոճից, հարգել ՏԻՄ օրենքի պահանջները եւ երկու օրը մեկ անգամ չհիմնավորված արտահերթ նիստեր չհրավիրել, վերանայել ներկայացված բյուջեն՝ հաշվի առնելով ավագանիների առաջարկությունները, զբաղվել համայնքի առջեւ ծառացած խնդիրների լուծմամբ»: Ավագանիներն իրենց հայտարարությունն ուղարկելու են նաեւ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը:

Ավագանիները հավաստիացնում են, որ իրենց նպատակները քաղաքականացված եւ անճնավորված չեն, այլ բխում են քաղաքի բնակիչների շահերից եւ միտված են քաղաքի բնականոն զարգացմանը: Այստեղ, սակայն, նկատելի է մի օրինաչափություն. այն ժամանակ, երբ դեռեւս քաղաքաթետ էր Վարուժան Ներսիսյանը, իսկ ներկայիս քաղաքաթետ Վարդան Ղալումյանը դեռեւս ավագանու անդամ էր, ինքն էր բոյկոտում ավագանու նիստերը եւ անգամ կազմակերպեց անվստահություն քաղաքաթետի նկատմամբ, մամուլով հանդես եկավ մեղադրանքներով, ինչին հաջորդեց Ներսիսյանի կողմից դրանց հակափաստարկները: Հիշեցնենք, որ քաղաքաթետի ընտրության ողջ քարոզարշավի ժամանակ Ղալումյանը Ներսիսյանի հանդեպ մեղադրանքներ էր ներկայացնում, թե չի բարձրացնում աշխատավարձերը, նպաստները, թոշակները՝ «մոռանալով», որ դրանք համայնքի ղեկավարի պարտականությունների մեջ չեն մտնում: Հիմա ստացվում է, որ Ղալումյանի դեմ, երբ նա արդեն քաղաքաթետի կարգավիճակում է, իր գործելաոճն է օգտագործվում, այժմ էլ իր դեմ են բողոքում ավագանիները: Ավագանիների բոյկոտը, կարծես թե, Իջեւանում դարձել է ավանդույթ, որի «հիմնադիրը» ներկայիս քաղաքաթետն է:

Ավագանու անդամ Նարինե Գրիգորյանը «Առավոտի» հետ զրույցում ասաց. «Մենք ուզում ենք հանգիստ աշխատել, գործ անել, ընդհանուր հայտարարի գալ: Բայց ստացվում է, որ քաղաքաթետը մեզ ուղղակի ուզում է արհամարհել, մեր ոչ մի կարծիքն ու առաջարկությունը հաշվի չի առնում: Մենք դեմ ենք համայնքի բյուջեն սեփական եկամուտների մասով կրճատելուն, ինչու, երբ այն ամեն տարի ավելացել է, բայց մեր խոսքը հաշվի չի առնվում: Աշխատավարձերը չի կարողանում վճարել, բայց քաղաքաթետարանում նոր հաստիքներ է ստեղծել: Իսկ ամենացավալին, որ քաղաքաթետը բանսարկություններով է զբաղված, դա անհանդուրժելի է»:

Հայտարարության տակ ստորագրած մյուս ավագանի Հրաչ Ներսիսյանը, ով նախկին քաղաքաթետ Վարուժան Ներսիսյանի եղբայրն է, «Առավոտի» հարցին, թե միգուցե իր մեջ ավելի շատ խոսում է եղբայրը, քան ավագանին եւ բնակիչը, պատասխանեց. «Այն մասով, որ եղբորս ու նրա տղային բանսարկությամբ ուզում էին դարձնել հանցագործ, խոստովանեմ, որ այդտեղ, իհարկե, իմ մեջ խոսում է եղբայրը, եւ թող ոչ ոք չասի, թե իմ փոխարեն այլ կերող կվարվեր, դա չի ների անգամ ոչ հարազատ մարդը, ուր մնաց՝ եղբայրը: Իսկ ինչ վերաբերում է մյուս հարցերին, այդտեղ ես շարքային բնակիչ եմ եւ ավագանի: Ի վերջո, իմ եղբոր քաղաքաթետության ժամանակ ամեն տարի համայնքի բյուջեն սեփական եկամուտների մասով ավելացել է, իսկ նոր քաղաքաթետը դա նվազեցնում է մոտ 1,5 մլն դրամով, ես, եւ առհասարակ ցանկացած տրամաբանող մարդ, ինչպես կարող եմ դա ընդունելի համարել, անկախ այն բանից՝ եղբայր է, եղբայր չէ: Արդեն երկրորդ ամիսն է մոտենում՝ աշխատավարձ չի տալիս մանկապարտեզներին, մշակույթի օջախներին, սպորտդպրոցին, թանգարանին, ինչու, այն դեպքում, երբ Վարուժանը անցած տարին փակել է 1մլն 800 հազար դրամի մնացորդով: Գոնե այդ գումարից աշխատավարձեր տա»:

Ըստ ավագանու անդամների, քաղաքաթետը ջրմուղին հունվար ամսվա համար վճարել է 800 հազար դրամ, այն դեպքում, երբ նախորդ տարիների համար ողջ տարվա կտրվածքով այդ գումարը կազմում էր մոտ 600 հազար դրամ: Հարկ է նշել, որ «Հայջրմուղկոյուղու» Իջեւանի մասնաճյուղի տնօրենը քաղաքաթետի ազգական Վոլոդյա Ղալումյանն է՝ ավագանու անդամ Վահե Ղալումյանի հայրը:

«Առավոտը» փորձեց այս եւ մյուս հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալ քաղաքաթետ Վարդան Ղալումյանից: Վերջինս, սակայն, մեր հեռախոսազանգերին չպատասխանեց: Իսկ քաղաքաթետարանի հեռախոսահամարներն անհասկանալի պատճառներով անջատված են:

ՆԱՀՐԱ ՎԱՆՅԱՆ

«Միայն քնած ժամանակ չեմ հիշում, որ քաղցած եմ»

Բնակարանում ուտելիքի աղարդյուն փնտրտուքներից հետո ասում է վանաձորցի կինը

Ամեն օր՝ բացի շաբաթ-կիրակի, նիհար, փոս ընկած դեմքով, սպիտակախառն մազերով կինը հագնում է օգնություն ստացած կարմիր ու սեւ նախշերով վերարկուն ու շտապում բարեգործական ճաշարան, որտեղ նրան է սպասում իր նման կարիքի մեջ գտնվող եւս 160 վանաձորցի:

Ճաշարանի միջանցքում նրա քթին է դիմաչում այդքան սպասված կերակրի հոտն ու էլ ավելի գրգռում արդեն յոթ տարի չհագեցող քաղցը:

Վանաձորցի Լաուրա Աղաբաբյանն օրվա մեջ ընդամենը մեկ անգամ է սնվում: Օրվա մնացած մասն էլ ոչ մի վայրկյան չի դադարում ուտելու մասին մտածելուց:

«Միայն քնած ժամանակ չեմ հիշում, որ քաղցած եմ»,- բնակարանում ուտելիքի աղարդյուն փնտրտուքներից հետո անկեղծանում է նա: Վանաձորցի կինը չի հիշում, թե երբ է վերջին անգամ կուշտ փորով հաց կերել, տանը լի սեղանի ու իր ձեռքով սիրելի աղցանը պատրաստելու մասին խոսելիս աչքերը փայլում են:

Ճաշարանում սնվելուց արդեն երեք ժամ անց անհաղթահարելի քաղցն իրեն զգացնել է տալիս, ինչն էլ մոռանալու համար մտովի տեղափոխվում է անցյալ, երբ կենդանի էին ամուսինն ու երեխան:

«Երջանիկ ժամանակներ էին, ամուսինս ասում էր, որ այնպես է ընտանիքը պահելու, որ բոլորը մատով ցույց տան»,- հիշում է 61 տարեկան Լաուրան, ով ամուսնությունից երկու տարի անց ավտովթարից կորցրել է ամուսնուն, իսկ մի քանի տարի անց էլ բժշկական սխալը որդու կյանքն է խլել:

«20 տարեկանից անբախտ մնացի, կորստի ցավը քիչ էր, հիմա էլ ես յոթ տարի է՝ աշխատանք չունեմ, ուր էլ գնում եմ, ասում են տեղ չկա կամ էլ տարիքդ մեծ ա: Թոշակ ու նպաստ էլ չեմ ստանում»,- պատմում է Լաուրան: «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության շրջանակներում Լոռու մարզի Ալավերդի, Վանաձոր, Սպիտակ, Տաշիր քաղաքներում գործող բարեգործական ճաշարաններում սնվում է 480 մարդ: Լաուրա Աղաբաբյանը նրանցից մեկն է: Հ/կ-ի Լոռու համայնքային կենտրոնի տնօրեն Սուսաննա Մարտիրոսյանի համոզմամբ՝ ճաշարան այցելող մարդիկ ունեն շփման, հոգեբանական ու սոցիալական աջակցության կարիք: «Աշխատատեղեր չլինելը, սոցիալական ծանր վիճակը այս մարդկանց ստիպում են իրենց գոյությունը պահպանելու համար սնվել ճաշարանում»,- ասում է նա:

Այս մարդիկ միայն ճաշարանում են տաք սնունդ ուտում:

«Աղքատությունը ճնշող է, եթե մարդը նորմալ հագնված չէ, ու մտնում է մի տեղ, որտեղ բոլորը լավ են հագնված, բնականաբար, ճնշվում է: Ինքնավստահության պակաս կա այս մարդկանց մեջ, անլիարժեքության բարդույթներ ունեն»,- բացատրում է կենտրոնի սոցիալական աշխատող Սյուզաննա Քոչարյանը:

Կիսաքաղց վիճակում հայտնված Լաուրան ժամանակին աշխատել է կարի արտադրամասում, սակայն այժմ 32 տարվա աշխատանքային փորձ ունեցող կնոջ համար աշխատանքի ընդունվելու բոլոր դռները տարիքի պատճառով փակ են:

«Որ ամառները սրա-նրա տները մաքրում եմ, բուրդ լվանում, երջանիկ եմ լինում, այդ օրերին կարողանում եմ գոնե հաց գնել, իրիկունները ուտել»,- ասում է նա: Սակայն շեշտում է, որ բախտը հաճախ չի ժպտում՝ տարվա մեջ մի քանի օր, իսկ վերջես էլ մարդիկ նախընտրում են իրենք անել այդ գործերը՝ փող չծախսելու համար: Լաուրան անհամբերությամբ հաշվում է թոշակի տարիքին հասնելու օրերը, երբ կեսօրից հետո, ճաշարանում սնվելուց բացի, հնարավորություն կունենա քաղցը մի փոքր հաղթահարած անկողին մտնել:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2009 թվականի դրությամբ ՀՀ-ում բնակչության 34,1 տոկոսը աղքատ է:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

Նոր սկիզբ քսան տարի անց՝ լավ է ուշ, քան երբեք

Այս օրերին տեղի է ունենում արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի այցը Հարավային Կորեա, Վիետնամ եւ Սինգապուր, որոնց հետ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել ուղիղ քսան տարի առաջ: Չնայած նախկինում տեղի ունեցած որոշ այցերի, Հայաստանը նշված երկրների հետ չի ունեցել քաղաքական եւ տնտեսական ակտիվ հարաբերությունների պատմություն ու, թերեւս, դրանք ակտիվացնելու համար նախադրյալների ստեղծմանն է ուղղված նախարարի այցը: Սակայն կան նաեւ այլ գործոններ, որոնք ուղղակիորեն շահագրգռում ու պարտավորեցնում են Հայաստանին դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:

Տնտեսական գործոն. «Ասիական տնտեսական հրաշքը», որը համաշխարհային տնտեսության երկրորդ շունչն է համարվում, ներառում է ոչ միայն Չինաստանի տնտեսական բումը, այլեւ ասիական «չորս վագրերի» թռիչքային զարգացումը: Հարավային Կորեան ու Սինգապուրը այդ չորս վագրերից երկուսն են: Տարիներ շարունակ մենք դժգոհում ենք, որ մեր տնտեսությունը դիվերսիֆիկացված չէ ոչ միայն ճյուղային առումով, այլ նաեւ ըստ ներդրում անող գործընկերների: Համաշխարհային տնտեսական ճգնաժամից դժվարությամբ ոտքի կանգնող Եվրոպայի ֆոնին ռուսական տնտեսական գերակա ներկայությանը լավագույն այլընտրանք կարող է լինել ասիական ներդրումային շուկան: Այս շուկայի միլիարդավոր ազատ դոլարների եւ մեներեսմենթի ներհոսքը ապահովելու համար են պայքարում Արեւելյան Եվրոպայի եւ Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներ: Անգամ Մերձավոր Արեւելքի երկրներն են մրցակցում այս երկրներից ներդրումներ ապահովելու գործում: Հայաստանի տնտեսության ներդրումային պակասորդը լրացնելու եւ ասիական արդյունավետ կառավարումը Հայաստան բերելու համար ուղղակի անհրաժեշտություն եւ նախապայման է երկկողմ հարաբերությունների ակտիվացումը եւ իրավապայմանագրային դաշտի ստեղծումը, ինչին էլ միտված է նախարարի ընդգրկուն այցը տարածաշրջան:

Քաղաքական գործոն. Հարավային Կորեան, Սինգապուրը եւ Վիետնամը վերջին տասնամյակների ընթացքում միջազգային հրատապ եւ օրակարգային խնդիրների նկատմամբ դրսեւորել են գերազանցապես պասիվ դիրքորոշում, եթե, իհարկե, հաշվի չառնենք Հյուսիսային Կորեայի հետ բանակցություններում Հարավային Կորեայի ներգրավվածությունը: Ոչ ագրեսիվ տնտեսական էքսպանսիայի չինական մոդելը կարծես թե օրինաչափություն է դառնում բուդդայական մշակույթ ունեցող երկրների համար, ինչը չի կարելի ասել մահմեդական հարավարեւելյան Ասիայի մյուս պետությունների համար, զորօրինակ՝ Ինդոնեզիայի, Մալայզիայի, Բրունեի: Վերջիններս, մահմեդական համերաշխության եւ Իսլամական համագործակցության կազմակերպության սկզբունքներից ելնելով, մշտապես պաշտպանում են ադրբեջանական եւ թուրքական նախաձեռնությունները, այդ թվում եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում: Դրա վերջին վառ օրինակը եղավ 2008 թվականի տխրահռչակ բանաձեւը, որի կրկնությունը տեղի չունեցավ ի շնորհիվ հաջորդող տարիների ակտիվ եւ կանխարգելիչ դիվանագիտության: Եթե սրան ավելացնենք Չմիավորման շարժման կազմակերպությունում Ադրբեջանի «համակուսակից» հարավարեւելյան Ասիայի փոքր պետություններին, ապա ստացվում է, որ վերոհիշյալ տարածաշրջանում հակակշիռների ձեւավորումը առավել քան հրատապ է: Իսկ դա կարելի է անել, կրկնվում են, զարգացնելով հարաբերությունները բուդդայական Ասիայի այնպիսի երկրների հետ, ինչպիսին են Հարավային Կորեան, Սինգապուրը, Թաիլանդը եւ Վիետնամը: Այստեղ եական կարող է լինել նաեւ նշված երկրների էներգետիկ ինքնուրույնությունը Ադրբեջանից:

Ի վերջո, այս երկրների ձայները ՄԱԿ-ի նման կառույցներում, միջազգային այլ կազմակերպություններում ունեն նույն արժեքը՝ մեկ պետություն-մեկ ձայն: Եվ այս երկրները եւս ունեն խորհրդարաններ, որոնք կարող են պատահական բանաձեւեր ընդունել, հատկապես հաշվի առնելով, որ մնալով պասիվ եւ օրակարգային հարցերում չընդգրկված, նրանց քաղաքական մարմինները չունեն բավական տեղեկացվածություն՝ իրական փաստերի եւ պատկերացում՝ կայացվող որոշումների հետագա վտանգավորության վերաբերյալ:

Եվս մեկ փաստարկ. մեր հարեւան Վրաստանն ու Ադրբեջանը վաղուց տարածաշրջանային դեսպանություններ են հիմնել Սեուլում, եւ Հայաստանը չի կարող իրեն նման շռայլություն ցույց տալ՝ չիրականացնել բարձրաստիճան այցելություններ:

Միայն այն հանգամանքը, որ, օրինակ, Կորեայի եւ Հայաստանի արտգործնախարարները պայմանավորվել են մոտ ապագայում նախապատրաստել եւ ստորագրել համաձայնագրեր տնտեսական, ներդրումային, գիտակրթական, մշակութային եւ մաքսային համագործակցության մասին, վկայում են այցի լրջության եւ նպատակաուղղվածության մասին: Շատ պետք է ջանալ կամ պարզապես պետք է առնվազն քսան-երեսուն տարի հետ գնալ, որպեսզի նման այցի կարեւորությունը թերագնահատվի:

Լավ հարաբերություններ սփյուռքի բացակայության պայմաններում. Հայաստանի անկախացումից ի վեր սփյուռքը ակտիվ դերակատարություն է ունեցել ոչ միայն երկրի ներքին գործընթացներում, այլեւ անուղղակի ազդեցություն է ունեցել իրենց բնակության երկրների հետ Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների վրա եւ դերակատարություն՝ մասնավորապես Ցեղասպանության բանաձեւերի ընդունման ուղղությամբ: Իրականում, բավական տարբեր, բարդ եւ միաժամանակ պարտավորեցնող է հարաբերություններ զարգացնել այն պետությունների հետ, որտեղ չկա եւ չի էլ եղել զգալի հայկական ներկայություն: Նախարար Նալբանդյանի այցի թիրախային երկրները հենց այդպիսիք են: Սակայն, մասնավորապես, Հարավային Կորեայի եւ Վիետնամի հետ կան որոշակի ընդհանրություններ, որոնց հիման վրա կարելի է կառուցել տվյալ երկրների՝ ձեռնպահությունից դեպի հայամետություն սահուն անցումը: Երկու երկրներն էլ Հայաստանի նման դարձել են մեծ տերությունների՝ «բաժանիր, որ տիրես» քաղաքականության զոհ, ներքաշվել են պարտադրված պատերազմի մեջ՝ իր բոլոր նյութական եւ մարդկային կորուստներով եւ ստորացման (humiliation) հոգեբանական շերտավորմամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ ընդհանրությունների տնտեսական, քաղաքական եւ զգայական հիմքի վրա դիրքորոշումների համերաշխության ձեւավորումը ասիական տարածաշրջանում առավել քան հրատապ է, իսկ այս ենթատեքստում արտգործնախարարի այցը՝ առավել քան անհրաժեշտ:

ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀԿ պատգամավոր

ՄՇԱԿՈՒՅԹ

Նամակ ներկա նախագահին՝ նախկին ղեկավարի համար

Մտավորականներն ուզում են մեծարված տեսնել Գրիգորի Հարությունյանին

Մի խումբ անվանի մտավորականներ նամակ են հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Նրանք խնդրում են նախագահի միջամտությամբ արժանին հատուցել պետական-քաղաքական գործիչ Գրիգորի Հարությունյանին (Արությունով):

«1937-1953թթ. խորհրդային հասարակարգի թերեւս ամենածանր փուլում Հայաստանի Հանրապետությունը ղեկավարում էր ներկայումս հանիրավի մոռացված մի վառ անհատականություն՝ Գրիգորի Հարությունյանը: Դժվար է գերագնահատել նրա վաստակը մեր երկրի զարգացման գործում, բայց զարմանալիորեն մինչ օրս նրա հիշատակը չի հավերժացվել, ո՛չ հուշարձան է կանգնեցվել, ո՛չ էլ փողոց անվանակոչվել»,- գրված է նամակում, որի տակ ստորագրել են կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ջիմ Թորոսյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՊՄ նախագահ Լեւոն Անանյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը, արվեստաբան, պրոֆեսոր Արաքսի Սարյանը, Գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը եւ գրող, հայ ժողովրդի բարեկամ Կիմ Բակշին:

Գ. Հ.

Լալա Մնացականյանի «Մայրը» մոայլ էր, իսկ իր խաղը՝ ոչ համոզիչ

Օրերս Համազգային թատրոնում դիտեցի ՀՀ վաստակավոր արտիստ Լալա Մնացականյանի բեմադրած «Մայրը» ներկայացումը՝ ըստ չեխ գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Կարել Չապեկի համանուն գործի: Գլխավոր՝ մոր դերը խաղում էր Լալա Մնացականյանը, ներկայացման մեջ ներգրավված էին Արմեն Կարապետյանը, Արսեն Ալբարյանը, Կաղլեն Աբրահամյանը, Ավետիս Միքայելյանը, Լավրենտի Տիգրանյանը եւ Անդրանիկ Անտոնյանը: Բեմադրիչը բեմադրությունը նվիրել է Հայոց բանակի կազմավորման 20-ամյակին:

Ներկայացման ընթացքում միջազգային հրատապ եւ օրակարգային խնդիրների նկատմամբ դրսեւորել են գերազանցապես պասիվ դիրքորոշում, եթե, իհարկե, հաշվի չառնենք Հյուսիսային Կորեայի հետ բանակցություններում Հարավային Կորեայի ներգրավվածությունը: Ոչ ագրեսիվ տնտեսական էքսպանսիայի չինական մոդելը կարծես թե օրինաչափություն է դառնում բուդդայական մշակույթ ունեցող երկրների համար, ինչը չի կարելի ասել մահմեդական հարավարեւելյան Ասիայի մյուս պետությունների համար, զորօրինակ՝ Ինդոնեզիայի, Մալայզիայի, Բրունեի: Վերջիններս, մահմեդական համերաշխության եւ Իսլամական համագործակցության կազմակերպության սկզբունքներից ելնելով, մշտապես պաշտպանում են ադրբեջանական եւ թուրքական նախաձեռնությունները, այդ թվում եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում: Դրա վերջին վառ օրինակը եղավ 2008 թվականի տխրահռչակ բանաձեւը, որի կրկնությունը տեղի չունեցավ ի շնորհիվ հաջորդող տարիների ակտիվ եւ կանխարգելիչ դիվանագիտության: Եթե սրան ավելացնենք Չմիավորման շարժման կազմակերպությունում Ադրբեջանի «համակուսակից» հարավարեւելյան Ասիայի փոքր պետություններին, ապա ստացվում է, որ վերոհիշյալ տարածաշրջանում հակակշիռների ձեւավորումը առավել քան հրատապ է: Իսկ դա կարելի է անել, կրկնվում են, զարգացնելով հարաբերությունները բուդդայական Ասիայի այնպիսի երկրների հետ, ինչպիսին են Հարավային Կորեան, Սինգապուրը, Թաիլանդը եւ Վիետնամը: Այստեղ եական կարող է լինել նաեւ նշված երկրների էներգետիկ ինքնուրույնությունը Ադրբեջանից:

Ի վերջո, այս երկրների ձայները ՄԱԿ-ի նման կառույցներում, միջազգային այլ կազմակերպություններում ունեն նույն արժեքը՝ մեկ պետություն-մեկ ձայն: Եվ այս երկրները եւս ունեն խորհրդարաններ, որոնք կարող են պատահական բանաձեւեր ընդունել, հատկապես հաշվի առնելով, որ մնալով պասիվ եւ օրակարգային հարցերում չընդգրկված, նրանց քաղաքական մարմինները չունեն բավական տեղեկացվածություն՝ իրական փաստերի եւ պատկերացում՝ կայացվող որոշումների հետագա վտանգավորության վերաբերյալ:

Եվս մեկ փաստարկ. մեր հարեւան Վրաստանն ու Ադրբեջանը վաղուց տարածաշրջանային դեսպանություններ են հիմնել Սեուլում, եւ Հայաստանը չի կարող իրեն նման շռայլություն ցույց տալ՝ չիրականացնել բարձրաստիճան այցելություններ:

Միայն այն հանգամանքը, որ, օրինակ, Կորեայի եւ Հայաստանի արտգործնախարարները պայմանավորվել են մոտ ապագայում նախապատրաստել եւ ստորագրել համաձայնագրեր տնտեսական, ներդրումային, գիտակրթական, մշակութային եւ մաքսային համագործակցության մասին, վկայում են այցի լրջության եւ նպատակաուղղվածության մասին: Շատ պետք է ջանալ կամ պարզապես պետք է առնվազն քսան-երեսուն տարի հետ գնալ, որպեսզի նման այցի կարեւորությունը թերագնահատվի:

Լավ հարաբերություններ սփյուռքի բացակայության պայմաններում. Հայաստանի անկախացումից ի վեր սփյուռքը ակտիվ դերակատարություն է ունեցել ոչ միայն երկրի ներքին գործընթացներում, այլեւ անուղղակի ազդեցություն է ունեցել իրենց բնակության երկրների հետ Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների վրա եւ դերակատարություն՝ մասնավորապես Ցեղասպանության բանաձեւերի ընդունման ուղղությամբ: Իրականում, բավական տարբեր, բարդ եւ միաժամանակ պարտավորեցնող է հարաբերություններ զարգացնել այն պետությունների հետ, որտեղ չկա եւ չի էլ եղել զգալի հայկական ներկայություն: Նախարար Նալբանդյանի այցի թիրախային երկրները հենց այդպիսիք են: Սակայն, մասնավորապես, Հարավային Կորեայի եւ Վիետնամի հետ կան որոշակի ընդհանրություններ, որոնց հիման վրա կարելի է կառուցել տվյալ երկրների՝ ձեռնպահությունից դեպի հայամետություն սահուն անցումը: Երկու երկրներն էլ Հայաստանի նման դարձել են մեծ տերությունների՝ «բաժանիր, որ տիրես» քաղաքականության զոհ, ներքաշվել են պարտադրված պատերազմի մեջ՝ իր բոլոր նյութական եւ մարդկային կորուստներով եւ ստորացման (humiliation) հոգեբանական շերտավորմամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ ընդհանրությունների տնտեսական, քաղաքական եւ զգայական հիմքի վրա դիրքորոշումների համերաշխության ձեւավորումը ասիական տարածաշրջանում առավել քան հրատապ է, իսկ այս ենթատեքստում արտգործնախարարի այցը՝ առավել քան անհրաժեշտ:

ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀԿ պատգամավոր

VIVAcell MTS

ԷՁԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Փոխարինող կազմերը արդարացնում են սպասելիքները

Երեւանի օլիմպիական հերթափոխի քոլեջում երեք օր ընթացած պայքարում որոշվեցին ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց չեմպիոնները:

Չնայած ազգային հավաքականների մեր առաջատար ծանրորդների բացակայությանը, մրցահարթակ մտած 2-րդ եւ 3-րդ համարները բավականին լուրջ արդյունքներ ցույց տվեցին: Մասնավորապես, տղաների 69 կգ քաշայինների պայքարում Սամվել Գրիգորյանի, Վանիկ Ավետիսյանի եւ Անդրանիկ Կարապետյանի բարձրացրած կիլոգրամները տեղավորվում են մեծահասակների աշխարհի առաջին վեցյակում եւ Եվրոպայի լավագույն եռյակում: Մասնագետները գոհ մնացին նաեւ 85 կգ քաշային Աղասի Աղասյանի մրցելույթից: Իսկ ինչ վերաբերում է գերծանր քաշայինների մրցակցությանը, պարզապես հիացրին տակավին պատանի Գոռ Մինասյանն ու ընդամենը 21 տարեկան Հայկ Հակոբյանը: Նրանց, բառիս բուն իմաստով, անզիջում մրցակցությունն ավարտվեց նրանով, որ պոկում վարժությունում հաղթեց Հայկը, իսկ հրումում ու երկամարտում՝ Գոռը: Ընդ որում՝ նրանք ամեն մի մոտեցումում իրենց տարիքային խմբի միջազգային չափանիշներին համապատասխանող կիլոգրամներ էին պահում գլխավերեւում: Նրանց պայքարն այնքան լուրջ էր, որ մասնագետների համոզմամբ, եթե մրցահարթակ մտներ նաեւ գերծանր քաշայինների մեր առաջատար Ռուբեն Ալեքսանյանը, այդ քաշային կարգում Հայաստանի առաջնությունը կհավասարվեր Եվրոպայի առաջնությանը:

Գոռ Մինասյան

Հիմնականում իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին նաեւ աղջիկները, որոնց ճնշող մեծամասնությունը դեռ պատանեկան տարիքում է: Մարզիչները գոհ մնացին Մելինե Դալուզյանից, որն աղաքինումից հետո ընդամենը մեկ ամիս է սկսել լիարժեք մարզվել ու այդ կարճ ժամանակահատվածում արդեն երկամարտում ցույց է տալիս 205 կգ: Մինչեւ օլիմպիական խաղեր նա դեռ լավագույն մարզավիճակին հասնելու ժամանակ ունի եւ մնում է Լոնդոնում մեդալների մեր հույսերից մեկը: Իսկ Իզաբելա Յայլյանը, որ 58 կգ քաշային կարգում ցույց տվեց երկամարտի 175 կիլոգրամ, շարունակելու է Մելինեի եւ Հռիփսիմե Խուրշուդյանի հետ նախապատրաստվել օլիմպիական խաղերին՝ որպես փոխարինող:

Ի՞նչ ցույց տվեց այս առաջնությունը: Նախ, որ ընդհանուր առաջընթաց կա: Գրեթե բոլոր քաշային կարգերում 2-րդ եւ 3-րդ համարների աճն ակնհայտ է: Թեկուզ միայն այն, որ Գոռ Մինասյանը երկամարտում իր անձնական ռեկորդները գերազանցեց ամբողջ 14 կիլոգրամով: Իսկ որ ամենակարեւորն է՝ այդ աճը դեռ նրանց հնարավորությունների սահմանը չէ: 2012-ին ծանրամարտի մի շարք անշափ կարեւոր մրցումներ կան. ապրիլին՝ Եվրոպայի մեծահասակների առաջնությունը Անթալիայում, մայիսին՝ աշխարհի երիտասարդների առաջնությունը Գվատեմալայում, օգոստոս-սեպտեմբերին՝ Եվրոպայի պատանիների առաջնությունը Ռումինիայում, նոյեմբերին՝ Ուսանողական համաշխարհային 3-րդ առաջնությունը եւ նոյեմբեր-դեկտեմբերին՝ Եվրոպայի 20-23 տարեկանների առաջնությունը (երկուսն էլ՝ Իսրայելում):

Ծանրամարտի Ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանն ասում է, որ Հայաստանի առաջնության արդյունքներով կորոշվի, թե աշքի ընկած մարզիկներից ով՝ ուր կմեկնի: «Անթալիա մեկնողների կազմն արդեն գրեթե որոշված է: Եվրոպայի մեծահասակների առաջնություն կմեկնեն միայն տղաները՝ 4 կամ 5 հոգի: Դա նրանց համար միջազգային մրցափորձի կուտակում է լինելու, ինքնադրսեւորման հնարավորություն: Սակայն տղաների մեջ, անկասկած, կլինեն մեկ-երկու հոգի, որոնք կպայքարեն նաեւ մեդալների համար: Գվատեմալա եւս միայն տղաներին կգործուղենք ու կոնկրետ պահանջներով: Նույնը լինելու է նաեւ մյուս բոլոր մրցումներում: Իսկ ինչ վերաբերում է աղջիկներին, հանրապետության առաջնությունում նրանց արդյունքները հույս են ներշնչում, որ արդեն 2013 թվականին նրանք (հասկանալի է՝ տղաներն էլ) պետք է որ ի վիճակի լինեն վարկանիշային մրցաշարերում պայքարել պատանեկան համաշխարհային օլիմպիադայի ուղեգրերի համար»,- ասում է Ֆեդերացիայի նախագահը:

ԺԱՄԱՆՑ

Օպերայում՝ մենապարող, ռեստորաններում՝ էկզոտիկ շոուների «մեղավոր»

Աշխարհում հեղինակավոր համերգասրահներում ներկայացվում են ինչպես դասական, այնպես էլ էկզոտիկ, երոտիկ շոուներ: Հայաստանում դիտարժան շոուները տեղափոխել են հիմնականում ռեստորաններ եւ էլիտար «օբյեկտներ», այսպիսով լայն հանդիսատեսին զրկելով պրոֆեսիոնալ շոուի հետ շփվելու հնարավորությունից:

«Առավոտը» զրուցեց ոչ միայն հայաստանյան, այլեւ մոսկովյան որոշ ռեստորաններում պահանջարկ վայելող «Էլդորադո» շոու- բալետի ղեկավար Սերգեյ Սաֆարյանի հետ: Նա 2007թ. հանդիսանում է Ազգային օպերային թատրոնի բալետի արտիստ, անցյալ տարի մենապարով հանդես է եկել Ռիկարդո Դրիգոյի «Չքնաղ տիկնիկում», իսկ այս տարվա մարտի 3-ին կայանալիք բալետային երաժշտության երեկոյին կներկայանա Վիվանդիերիի երաժշտությամբ, Արթուր Սեն Լեոնի խորեոգրաֆիայով ստեղծված pas de six համարով:

Սերգեյ Սաֆարյանը հայտնեց, որ «Էլդորադո» շոու- բալետը հիմնադրել է 6 տարի առաջ՝ 6 համախոհների հետ: Ներկայանում են ռեստորաններում, նկարահանվում են գովազդներում, ֆիլմերում: «Պարային համարները բեմադրում եմ ինքս՝ լատինամերիկյանից մինչեւ տարբեր ազգերի, ինչպես նաեւ համաշխարհային դասական կոմպոզիտորների հանրահայտ ստեղծագործությունների երաժշտությամբ, դրանք համեմելով էկզոտիկ կենդանիների (օձեր, կոկորդիլոս, թունավոր սարդեր) եւ տարբեր աքսեսուարների (սրեր, կոտրված աղակի, մեխեր, կրակ եւ այլն) ներկայությամբ»,- ասաց մեր զրուցակիցը: Նա տեղեկացրեց, որ կենդանիների «մասով» օգնում է Կարեն Մարտիրոսյանը, որը գրագետ խորհուրդներ է տալիս, թե ինչպես վարվել նրանց հետ: Մեր զրուցակիցը հիշեց մի դեպք,

երբ 20 կիլոգրամ կշռող 2 մետրանոց պիթոնը ելույթի ժամանակ փաթաթվել է իրեն ու բաց չի թողել, եւ Կարենի օգնությամբ է մի կերպ փրկվել:

Ս. Սաֆարյանը հայտնեց, որ հանդես են գալիս նաեւ բարեգործական համերգներով ոչ միայն Երեւանում, այլեւ մարզերում եւ Արցախում: «Էլդորադոյի» ղեկավարին խնդրեցինք փոքր-ինչ մանրամասնել իրենց ծրագիրը, երբ հանդես են գալիս, դիցուք, հարսանիքների ժամանակ:

«Շոուի համարները կազմված են բացառապես հանրամատչելի երաժշտությունից: Երբեմն ներկայացնում ենք բալետային համար, որը բեմադրել եմ Վերդիի «Տրավիատա» օպերայից հայտնի «Կենաց երգի» հնչյուններով եւ այլն»,- ասաց արվեստագետը:

Իրենց «հանդիսատեսի» մասին մեր հետաքրքրությանն ի պատասխան՝ հակիրճ նշեց, որ նրանք առպահով խավից են՝ նախարարներից մինչեւ օլիգարխներ: Վարձատրության «մասով» էլ ասաց, թե ամեն անգամ տարբեր է. «Բնականաբար չես համեմատի աշխատավարձի հետ, նույնիսկ մեկ համարի համար կարող ես վաստակել աշխատավարձի բազմապատիկը»:

Հարցին՝ «Էլդորադոյում» զբաղվածությո՞ւնն է պատճառը, որ թատրոնում ընդամենը 1-2 մենապար է վստահված իրեն, Սերգեյ Սաֆարյանը պատասխանեց. «Ինձ համար առաջնայինը թատրոնն է. «Էլդորադոն» բացարձակ չի խանգարում արվեստիս: Եվ հետո թատրոն միանգամից չեն ընդունվում իբրեւ մենակատար, այդպիսին դառնում են տարիների ընթացքում»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Հաշվիչ մեքենաների հոր» հիշատակին

Այսօր լրանում է ճանաչված գիտնական Միհրան Սեմերջյանի ծննդյան 80-ամյակը: Նա 1977 թվականից ղեկավարել է Երեւանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը: Սեմերջյանի մասնակցությամբ ստեղծվել եւ արտադրության մեջ են դրվել «Հրազդան», «Նաիրի» եւ այլ հաշվիչ մեքենաներ: Մ. Սեմերջյանի գիտական աշխատանքները մեծապես նպաստել են հաշվիչ տեխնիկայի զարգացմանը: «Մենք միշտ իրար հետ ենք եղել, սովորել եւ աշխատել ենք միասին: Դեռ 1960 թվականից Միհրանն արդեն մեքենաներ էր ստեղծում ու տարբեր երկրներից դասախոսությունների հրավերներ ստանում: Բուլղարիայում աշխատանքի ժամանակ նրան ասում էին «հաշվիչ մեքենաների հայր»,- պատմում է գիտնականի ուսանողական տարիների լավագույն ընկերը, կինը՝ Լենա Բաղալյանը: Նա Երեւանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը ղեկավարել է մեծ պատասխանատվությամբ:

«Տնօրենի հետ հանդիպման հատուկ օրեր կային: Այլ օրերին, եթե ցանկանում էին տեսնել Միհրանին, ինձ էին դիմում՝ որպես նրա կին, ես էլ հուսահատ ասում էի, որ ոչինչ չեմ կարող անել: Միայն կարող եմ խորհուրդ տալ՝ առավոտյան 8-ից 20 պակաս լինել մուտքի մոտ ու «պատահաբար» հանդիպել նրան: Եվ խիստ էր, եւ բարին կամեցող: Չնայած առողջական խնդիրներին, նա վերջին տարիները նվիրել է գիտությունների զարգացմանն ու մեքենաշինության առաջընթացին: Ոչ ես, ոչ էլ բժիշկները չէինք կարող ասել, որ շաշխատի, որովհետեւ նա ապրում էր գիտությամբ, դա նրա կյանքն էր»,- փաստում է տիկին Լենան: Միհրան Սեմերջյանը մահացավ 1986 թվականին: Մեծ գիտնականին ու բարեսիրտ մարդուն դեռ երկար կհիշեն:

ՄԱՐԻԱՄ ՕՀԱՆՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի միջազգային լրագրության մագիստրատուրայի մագիստրանտ